Իրանի դեսպան Մոհամադ Ռեիսին Մայր Աթոռում

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը կարեւորեցին աշխարհասփյուռ հայության եւ ազգային կառույցների ու հասարակությունների շարունակական աջակցությունը սիրիահայությանը՝ Սիրիայում տիրող դժվարին այս շրջանում:

Ուրախությամբ ընդունելով առաջիկա սեպտեմբերի 24-27-ը Մայր Աթոռում գումարվելիք Հայ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովի մասին տեղեկությունը՝ ՀԲԸՄ նախագահն իր մաղթանքները բերեց ժողովի աշխատանքներին՝ ընդգծելով եպիսկոպոսաց ժողովի կարեւոր առաքելությունը համայն հայության կյանքում:

Հանդիպմանը մասնավոր անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությանը, կրթական, ընկերային եւ եկեղեցաշինական ծրագրերին: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ինչպես անձնապես տիար Պերճ Սեդրակյանին՝ որպես Մայր Աթոռի բարերարի, նույնպես եւ ՀԲԸՄ բոլոր անդամներին՝ Ս. Էջմիածնի հանդեպ իրենց ուշադրության եւ նվիրումի համար:

Իր հերթին ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանն իր հավատարմությունը հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ վստահեցրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը շարունակելու է ըստ ամենայնի զորակցել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու գործունեությանը եւ Մայր Աթոռի ազգանպաստ ծրագրերին:

ՀՀ-ՈՒՄ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամադ Ռեիսիին եւ դեսպանության մշակույթի խորհրդական Մեհրան Շիրավանդիին:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն արձանագրեց, որ նման հանդիպումները նպաստում են փոխհամագործակցության զորացմանը եւ կապերի ամրապնդմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձր գնահատեց երկու երկրների միջեւ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը:

Անդրադառնալով Սիրիայում տիրող ծանր իրավիճակին՝ Նորին Սրբությունն իր խորը մտահոգությունն արտահայտեց այս կապակցությամբ՝ տեղեկացնելով, որ Մայր Աթոռը մշտական կապի մեջ է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի հետ եւ ամեն ջանք գործադրում է՝ ի զորակցություն Սիրիայի ժողովրդի եւ սիրիահայ համայնքի: Նորին Սրբությունը նաեւ հույս հայտնեց, որ միջազգային հանրության խաղաղասեր ջանքերը կկարողանան ապահով եւ կայուն վիճակ ստեղծել տարածաշրջանում եւ մասնավորապես՝ Սիրիայում:

Հանդիպմանը դեսպանատան մշակույթի կենտրոնի կողմից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ընծայվեց «Հիսուս Քրիստոսը Պետրոս Առաքյալի հետ» փոքրագրություն-նկարը, որը երկու տարվա ընթացքում պատրաստել է իրանցի մահմեդական արվեստագետ Մեհդի Աղազադեն: Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով այս ընծայի համար, արվեստագետի գործը նկատեց կրոնների երկխոսության, փոխհանդուրժողականության եւ եղբայրական ոգու լավագույն դրսեւորում՝ նշելով, որ փայտյա պատկերն իր արժանի տեղը կգտնի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավաքածուում:

ՀՀ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՒ ԱՄՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՈՍՆԱԿԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ Կալիֆորնիայի Նահանգային ժողովի խոսնակ Ջոն Փերեզի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ողջունեց ՀՀ Ազգային ժողովի եւ ԱՄՆ Կալիֆորնիայի Նահանգային ժողովի միջեւ ձեւավորվող համագործակցությունը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաեւ Կալիֆորնիայի նահանգային խորհրդի անդամներին՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Կալիֆորնիայի հայ համայնքի կյանքին եւ նրա կարեւոր ներդրմանը նահանգի զարգացման գործում:

Իր հերթին ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգային խորհրդի խոսնակ Ջոն Փերեզը շնորհակալություն հայտնեց հայոց հոգեւոր կենտրոնում ջերմ ընդունելության համար՝ իր խոսքում մասնավորապես անդրադառնալով այցի նպատակին եւ Հայ Եկեղեցու դերակատարությանը համայն հայության կյանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ